## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍՆ

## ՍԱՂԻԱՆԻ ՎԱՆՔԻ ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆ.

Սաղիանի վանքի և միւս մեծ թերութիւնը լրացնելոյ համար՝ այն է վանական դպրոցի հաստատութեան գործը կարգի դնելոյ համար, որ ամենակարևորն էր այս վիճակի ժողովրդեան համար, մանաւանդ թէ վեհափառ կաթուղիկոսը տ. Մակար իւր կոնդակի մէջ՝ վանքի տաճարի օծման թոյլտուութեան համար՝ տուած 'ի 15-ն դեկտ. 1887 ամի համար 552, գրէ.

«Մեծայոյս եմք, զի յետ այսորիկ աշխատ լինիջիք զտաճարն զայն հոյակապ պայծառացուցանել նեղբին և արտաքին բարեզարդութեամբք և առընթեր նմին պահպանել զվանական դպրոց մի առ 'ի պատրաստել զարժանաւոր պաշտօնեայս և սպասաւորս 'ի նմին»։

Ամենայն օր մտածելով և խորհրդակցելով բանիմաց մարդկանց հետ, եղրակացրինք Հառիճոյ վանքի վանական դպրոցի կառավարչական կանոնադրութեան հետևել, որոյ օրինակն արդէն ստացել էի արժանապատիւ Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցից, միջոցաւ հոգևորդւոյն իմոյ Մեսրովբ քահանայի Գէօնջեանց։

Եւ այն կանոնադրութիւնը այս վիճակի հանգամանացը յարմարացնելով և վանքի դրութեանը՝ պատրաստեցի, ուղարկեցի Բագու քաղաքի մեր գործակալ արժանապատիւ Խորէն աւագ քահանային՝ կարդալ ազգասէր իշխանաց մօտ և հրաւի-